# ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 55 - 56 (16654) ՇԱԲԱԹ, 14 ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ԳՈՐԾԱԴԻՐ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԿՍՎԵՑ ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ ԵՎ ԿԱՎԱՐՏՎԻ ԱՅՍՕՐ՝ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ




*Հուլիսի 12-ին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն ներկայացրեց իր գլխավորած կառավարության կազմը: Մինչ պաշտոնական ներկայացնելուն, գործադիր գերագույն մարմնի նոր կազմը քննարկվել է «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության քաղաքական խորհրդի եւ խորհրդարանական մեծամասնության նիստում:*

*Կառուցվածքային փոփոխությունների համաձայն, Վրաստանի կառավարության կազմում, նախկին 14-ի փոխարեն, կլինի 10 նախարարություն եւ մեկ պետական նախարարի աշխատակազմ:*

Վարչապետ Մամուկա Բախտաձեն հանրությանը ներկայացրեց կառավարության նոր կազմը, որոնց թվում երեք նոր նախարարներ են՝ Միխեիլ Բատիաշվիլին, Գիորգի Քոբուլիան եւ Իվանե Մաճավարիանին:

ԵՎ այսպես, Վրաստանի կառավարության կազմը, որը հուլիսի 14-ին ներկայացվելու է խորհրդարանին՝ վստահության քվե ստանալու համար.

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար - **Միխեիլ Բատիաշվիլի,** էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար - **Գիորգի Քոբուլիա**, Ֆինանսների նախարար - **Իվանե Մաճավարիանի**, Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար - **Մայա Ցքիտիշվիլի**, Բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար - **Լեւան Դավիթաշվիլի**, Արտաքին գործերի նախարար - **Դավիթ Զալկալիանի**, Ներքին գործերի նախարար - **Գիորգի Գախարիա**, Արդարադատության նախարար - **Թեա Ծուլուկիանի**; Պաշտպանության նախարար - **Լեւան Իզորիա**, Բռնազավթված տարածաշրջաններից փախստականնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 11-12-ը, Բրյուսելում, անցկացվեց ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովը: Գագաթաժողովին հրավիրվածների թվում էր նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*




Հայաստանի կառավարության ղեկավարը, ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում, ոչ ֆորմալ, աշխատանքային հանդիպումներ ունեցավ մի շարք երկրների առաջնորդների հետ: Մասնավորապես, վարչապետը հանդիպել է Աֆղանստանի նախագահ Աշրաֆ Ղանիի, Բելգիայի Թագավորության վարչապետ Շառլ Միշելի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Իտալիայի վարչապետ Ջուզեպպե Կոնտեի, Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի, Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեի, Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասի, Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի, Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչես-Պերես Կաստեխոնի, Մակեդոնիայի վարչապետ Զորան Զաեւի, Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկայի եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ԵՐԿՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

*Հուլիսի 11-12-ին, Բրյուսելում, անցկացվեց Հյուսիսատլանտյան ալյանսի անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովը: Հավաքի մասնակիցների թվում էր նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:*



Գագաթաժողովի շրջանակներում՝ անցկացվեց Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստը, որի արդյունքներով ընդունվեց հռչակագիր:

Հռչակագրում ՆԱՏՕ-ի ղեկավարները լիովին աջակցում են Վրաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում:

Փաստաթուղթը խստորեն դատապարտում է Ռուսաստանի կողմից Վրաստանի երկրամասերի՝ Աբխազիայի եւ, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը:

«Մենք դատապարտում ենք Աբխազիայում եւ Հարավային Օսեթիայում մարդու իրավունքների կոպիտ խախտումները, ռազմականացումը, փշալարերի եւ արհեստական սահմանների կառուցումը: Այս քայլերը խախտում են Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը եւ հակասում մի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՈԼՈՐՏ

## ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԱՏՈՒԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

*Հունիսի 1-ին սպառվեց Վրաստանի կառավարության ընթացիկ տարվա մարտի 15-ի թիվ 598 որոշմամբ Թուրքիայից կարտոֆիլի ներկրման արգելքի ժամկետը, որի մասին «Վրաստան» թերթը գրել էր ընթացիկ տարվա մարտի 17-ի թիվ 21-22 համարում: Գործադիրի սույն որոշումը այլ պատճառների հետ միասին, առավելապես պայմանավորված էր տեղի կարտոֆիլագործների կողմից աճեցրած բերքի իրացման հիմնախնդրի կարգավորման ցանկությամբ: Մենք փորձեցինք պարզել, թե եռամսյա արտոնյալ այդ ժամկետը, ինչ ներգործություն ունեցավ տեղում, մասնավորապես՝ Սամցխե-Ջավախեթիի երկրամասում աճեցրած կարտոֆիլի իրացման հարցի վրա:*

Այդ հարցով դիմեցինք Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում ճանաչված ֆերմերներ Հովհաննես Մուրադյանին եւ Սայաթ Մկոյանին:

**Հովհաննես Մուրադյան (Ախալքալաքիի մունիցիպալիտետի Չանդուրա գյուղ).-** Բնականաբար, պետության կողմից նշանակալից քայլ էր երեք ամսով Թուրքիայից կարտոֆիլի ներկրման արգելումը, ինչը հնարավորություն ընձեռեց իրացնել աճեցրած բերքի նշանակալից մասը, դրա համար երախտապարտ ենք: Իհարկե, հասկանալի է, որ դա ժամանակավոր միջոցառում է, եւ հարկ է մշակել օրենսդրության վրա հիմնված մեխանիզմ, որը կնպաստի մեր կարտոֆիլագործների համար

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵԱՀԿ

## ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՏԱՍԸ ՏԱՐԻ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ» ԲԱՆԱՁԵՎԸ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԿՈՉ Է ԱՐՎՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԵՏԵՐԸ

*ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովն ընդունել է Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Սոփիո Քացարավայի կողմից նախաձեռնած «10 տարի՝ օգոստոսյան պատերազմից հետո» բանաձեւը: Փաստաթուղթն ընդունվել է ձայների մեծամասնությամբ՝ 45 կողմ, 2 դեմ: Բանաձեւը կքննարկվի լիագումար նիստում:*

Ինչպես հայտարարեց Սոփիո Քացարավան, չնայած, բոլոր փուլերում Ռուսաստանի դիմակայության, գործընկերների աջակցությամբ, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը բանաձեւն ընդունել է բացարձակ մեծամասնությամբ:

Բանաձեւի համաձայն, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը Ռուսաստանին կոչ է անում Վրաստանի տարածքներից դուրս բերել ռազմական ուժերը եւ լիովին կատարել 2008 թվականի օգոստոսի 12-ի հրադադարի պայմանագրի պայմանները:

Վեհաժողովը դատապարտում է նաեւ Վրաստանի քաղաքացիների՝ Տատունաշվիլու, Օթխոզորիայի եւ Բաշարուլիի սպանությունները, եւ Ռուսաստանից պահանջում չմիջամտել քննչական գործընթացներին՝ միջազգային գործընկերների հետ:

Բանաձեւում կարեւորվում է մար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ԳՈՐԾԱԴԻՐ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար - **Դավիթ Սերգեենկո**, Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար - **Քեթեւան Ցիխելաշվիլի**:

Նշենք, որ իրականացված կառուցվածքային փոփոխությունների համաձայն, մշակույթի եւ սպորտի նախարարությունը միանում է կրթության նախարարությանը, քրեակատարողականության նախարարությունը՝ արդարադատության նախարարությանը, բռնազավթված տարածքներից բռնի տեղահանված անձանց, փախստականների եւ վերաբնակեցման նախարարության փոխարեն, նրա գործառույթը կկատարեն երեք տարբեր գործակալություններ՝ այսպես, փախստականների վերաբնակեցման գործառույթը կկատարի ենթակառուցվածքների նախարարությունը, միգրացիան կներառի ՆԳՆ-ը, սոցիալական քաղաքականությունը՝ առողջապահության նախարարությունը:

Բացի այդ, կրոնի գործակալությունը կմիանա հաշտության եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմին: Էկոնոմիկայի նախարարության տարածքային զարգացման բաղադրիչը փոխանցվում է ենթակառույցների նախարարությանը:

Ինչպես երեւում է վերոնշյալից, կառավարության նոր կազմում կատարվել է երեք փոփոխություն, մյուսները՝ պահպանել են իրենց պաշտոնները:

Ավելացնենք, որ կառավարությանը վստահություն ձեռք բերելու համար հարկավոր է 76 պատգամավորի աջակցությունը:

## ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



***Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն Պատիժների կատարման եւ պրոբացիայի նախկին նախարար Կախա Կախիշվիլուն ներկայացրել է որպես երկրի կառավարության աշխատակազմի ղեկավար:***

Վարչապետի խոսքով, Կախիշվիլին նախարարների կաբինետում ամենահաջողված նախարարներից է եղել:

«Մենք նպատակ ունենք բոլոր ուղղություններով հասնել հաջողված բարեփոխումների: Կառավարության աշխատակազմն այդ գործում մեծ դեր ունի, ուստի, Կախան, զբաղեցնելով աշխատակազմի ղեկավարի պաշտոնը, կկարողանա թիմի հետ համակարգել նախատեսվող բարեփոխումները»,- ասել է Բախտաձեն:

Վարչապետը նշել է նաեւ, որ նոր կառավարության նախանշած բարեփոխումները վերաբերում են 2018-2019 թվականներին: «Այս բարեփոխումները պահանջում են համակարգված աշխատանք: Բնականաբար, կառավարության աշխատակազմը հատուկ գործառույթ ունի, վստահ եմ, որ Կախա Կախիշվիլին այն պատվով կկատարի»,- նշել է Մամուկա Բախտաձեն:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

# ԸՆԴՈՒՆՎԵԾ ԵՐԿՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջազգային իրավունքին ու միջազգային պարտավորությունների սկզբունքներին»,- նշված է հռչակագրում:

Հռչակագրում Ռուսաստանին կոչ է արվում կատարել նաեւ 2008 թվականի օգոստոսի 12-ին կրակի դադարեցման մասին ձեռք բերված համաձայնագրի կետերը, մասնավորապես՝ Վրաստանի տարածքներից դուրս բերել ռուսական ուժերը եւ թույլ տալ միջազգային անվտանգության միջոցառումներ իրականացնել:

«ՆԱՏՕ-ի անդամ երկրները աջակցում են Ժնեւյան բանակցություններին՝ ընդգծելով Վրաստանի միջազգայնորեն ճանաչված սահմաններում հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ շոշափելի արդյունքների հասնելու անհրաժեշտությունը»,- ասված է հայտարարության մեջ:

# ՅԵՆՍ ՍՏՈԼՏԵՆԲԵՐԳ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ»




***Բրյուսելում, ՆԱՏՕ-ի երկրների ղեկավարների գագաթաժողովի շրջանակներում, անցկացված Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի հանդիպման ավարտից հետո, ալյանսի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ անցկացրած համատեղ մամլո ասուլիսում, հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի գործընկերությունը եզակի է Վրաստանի հետ, Վրաստանը դաշինքի ամենակարեւոր գործող գործընկերներից եւ հավատարիմ ընկերներից մեկն է:***

- Ուրախ եմ, ձեզ հյուրընկալել այստեղ եւ ուրախ եմ, որ միացել եք Բրյուսելում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի առաջին նիստից անցել է 10 տարի, եւ այդ ժամանակից ի վեր մեր գործընկերությունը դարձել է ավելի սերտ: ՆԱՏՕ-ի գործընկերությունը եզակի է Վրաստանի հետ: Դուք դաշինքի ամենակարեւոր գործող գործընկերներից եւ հավատարիմ ընկերներից մեկն եք: Մեր գործընկերությունը ՆԱՏՕ-ին եւ Վրաստանին ավելի ապահով եւ պաշտպանված է դարձնում,- հայտարարեց Ստոլտենբերգը:

Ըստ Յենս Ստոլտենբերգի հայտարարության՝ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ-ի անդամ եւ սա հաստատել են դաշինքի անդամները:

Բրյուսելում, գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, պաշտոնատար այլ անձանց հետ:

ԵԱՀԿ

# ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՏԱՍԸ ՏԱՐԻ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ» ԲԱՆԱՁԵՎԸ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԿՈՉ Է ԱՐՎՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԵՏԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դու իրավունքների միջազգային դիտորդական մեխանիզմների թույլտվության եւ բռնի տեղահանված անձանց սեփական բնակավայր արժանի եւ անվտանգ վերադարձի անհրաժեշտությունը:

- Շատ լավ նախադեպ է, երբ հանձնաժողովում նման աջակցություն կա: Լիագումար նիստում, հավանաբար, դիմադրություն կլինի, սակայն, այս բանաձեւը կընդունվի, քանի որ ճիշտ հիմքեր ունի եւ արտացոլում է իրականությունը,- նշեց ԵԱՀԿ ԽՎ-ի նախագահ Գիգի Ծերեթելին:

Քվեարկությանը ներկա չէին Ռուսաստանի ներկայացուցիչները:

## ԳԻԳԻ ԾԵՐԵԹԵԼԻՆ՝ ԵԱՀԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



***Բեռլինում ավարտվեց ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի 27-րդ նստաշրջանը, որի աշխատանքին մասնակցում էր 57 երկրի ավելի քան 300 պատվիրակ:***

Խորհրդարանականները քննարկեցին ԵԱՀԿ տարածքում առկա մարտահրավերները եւ ընդունեցին համապատասխան բանաձեւ:

Նստաշրջանի եզրափակիչ օրը խորհրդարանականները քննարկեցին կազմակերպչական հարցեր: Գաղտնի քվեարկությամբ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը խորհրդարանի մշտական պատվիրակության անդամ Գիգի Ծերեթելուն եւս մեկ տարով ընտրեց նախագահ:

Հատկանշական է, որ Գիգի Ծերեթելին նախագահի պարտականությունները կատարում էր 2017 թվականի նոյեմբերից: Նրանից հետո, երբ գործող նախագահ Ավստրիայի խորհրդարանի անդամ Քրիստինե Մուտոնենոյի կուսակցությունն ընտրությունների ժամանակ համապասխան ձայներ չկարողացավ հավաքել:



ՆԱՏՕ

### ԱԼՅԱՆՍԸ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ

*Հուլիսի 11-12-ին, Բրյուսելում, անցկացվեց Հյուսիսատլանտյան ալյանսի երկրների ղեկավարների գագաթաժողովը: Հավաքի մասնակիցները քննարկեցին գլոբալ անվտանգության հետ կապված հարցեր, անդրադարձան ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցին: Ինչպես հայտարարեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, Եվրոպական երկրները գագաթաժողովին համաձայնության են եկել իրենց վճարներն ավելացնելու «չտեսնված բարձրության էական առաջընթաց արվեց»:*

*Մեկ տարում ՆԱՏՕ-ի երկրները ռազմական ծախսերն ավելացրել են 33 միլիարդ դոլարով, ասել է նա: «Ես հուսով եմ, որ մեզ կհաջողվի համաձայնության գալ Ռուսաստանի հետ: Կարծում եմ, դա մեզ կհաջողվի: Նրանք էլ, ովքեր գտնվում են դահլիճում, այդպես են կարծում»,- ասել է Թրամփը:*

*Թրամփի խոսքով՝ ՆԱՏՕ-ի երկրների ղեկավարներն իրեն շնորհակալություն են հայտնել Ռուսաստանի նախագահի հետ կայանալիք հանդիպման համար:*

*Հիշեցնենք, որ Թրամփի եւ Պուտինի հանդիպումը տեղի կունենա հուլիսի 16-ին, Հելսինկիում:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

*Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Բորիս Ջոնսոնը հրաժարական է տվել:*

*Վերջին 24 ժամվա ընթացքում նա արդեն երկրորդ նախարարն է, որը, երկրի վարչապետ Թերեզա Մեյի կողմից իրականացվող «Բրեքսիտի» ծրագրի հետ կապված անհամաձայնության պատճառով, հեռանում է պաշտոնից:*

*Նախքան Բորիս Ջոնսոնը, պաշտոնից հեռացել էր «Բրեքսիտի» նախարար Դեւիդ Դեւիսը եւ ԵՄ-ից դուրս գալու հարցերով դեպարտամենտի ղեկավար Սթիվ Բեյկերը:*

ՃԱՊՈՆԻԱ

### ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՀԱՑԵԼ Է 204 ՄԱՐԴ

*Ճապոնիայում հորդառատ անձրեւների հետեւանքով մահացել է 204 մարդ, իսկ 60-ն անհետ կորած են համարվում:*

*Հորդառատ անձրեւներից տուժածների փրկարարական աշխատանքներին մասնակցում են ոստիկանության, հրշեջ ծառայության շուրջ 48 հազար աշխատակիցներ: Վարչապետ Սինձո Աբեն՝ անձրեւներից տուժած շրջաններում իրադրությունը «ծայրահեղ լուրջ» է որակել:*

*Հուլիսի 6-ից Ճապոնիայի հարավ-արեւմուտքում հորդառատ անձրեւներ են սկսվել: Օդերեւութաբաններն այդ շրջաններում արտակարգ տագնապ են հայտարարել: Շատ վայրերում ջուրը հասնում է շինությունների երկրորդ հարկեր:*

ԹԱԻԼԱՆԴ

### 18 ՕՐՅԱ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԲՈԼՈՐԸ ՓՐԿՎԵՑԻՆ

*Թաիլանդում փրկարարները Քաո Լուանգ քարանձավից երկրի երես են հանել 12 դպրոցականներից վերջինին եւ մարզիչին, որոնք այնտեղ էին գտնվում ավելի քան երկու շաբաթ:*

*Թաիլանդի քարանձավից դուրս բերված երեխաները հիվանդանոցում կմնան, հավանաբար, մեկ շաբաթ:*

*Նշենք, որ 11-ից 16 տարեկան 12 դեռահասը եւ նրանց 25-ամյա մարզիչն անհետացել էին հունիսի 23-ին, Թաիլանդի Քաո Լուանգի քարանձավում, որտեղ տեղած հորդառատ անձրեւի հետեւանքով քարանձավը լցվել էր ջրով եւ խումբը չէր կարողացել դուրս գալ այնտեղից:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ



***Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանի հետ, ով երկրում ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը:***

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների օրակարգի հարցերը, ընդգծեցին եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի առաջընթացը: Առանձնակի ուշադրություն հատկացրին Եվրամիության հետ Վրաստանի տնտեսական ինտեգրման թեմային:

Հանդիպմանը կողմերը բարձր գնահատական տվեցին երկրում իրականացված բարեփոխումներին, որոնք իրականացվում են փոքր եւ միջին գործարարության աջակցության նպատակով, նախաձեռնություններին, որոնք նպաստում են եվրաինտեգրմանը:

Վրաստանի վարչապետը եւ Եվրամիության դեսպանը քննարկեցին նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ ԱԾՂՈՒՐԻՈՒՄ

***Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ, երկրի տարածաշրջաններում շարունակվում է հասարակական կենտրոնների շինարարության գործընթացը: Հուլիսի 9-ին, նախարարը, Ախալցիխեի մունիցիպալիտետիԱծղուրի գյուղում, մասնակցեց թվով 53-րդ հասարակական կենտրոնի բացման արարողությանը:***



Արժեչափորոշիչներին համապատասխան, նոր կառույցը լրիվությամբ նախատեսված է հասարակական կենտրոնի գործունեության համար: Հատկանշական է, որ, վերջին 48 տարիների ընթացքում, Ածղուրիում վարչական ոչ մի շենք չի կառուցվել: Հասարակական նոր կենտրոնում գործում է նորագույն տեխնիկայով հագեցած գրադարան, որտեղ, էլեկտրոնային գրքերի հետ միասին, ներկայացվում են նաեւ տպագիր հրատարակություններ:

Նշենք, որ Ածղուրիում բացված հասարակական կենտրոնը, հանրային եւ մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցության հիանալի օրինակ է: Կենտրոնում մատչելի կլինեն ոչ միայն հանրային սպասարկումները, այլեւ՝ «Լիբերթի» բանկի, «Մագթիի» ծառայությունները, ինչը կենսաթոշակառուներին հնարավորություն կընձեռի կենսաթոշակը ստանալ՝ առանց գյուղից դուրս գալու, իսկ երիտասարդներին՝ անվճար համացանցից օգտվելու:

Ածղուրիի հասարակական կենտրոնը կսպասարկի գյուղի եւ հարակից բնակավայրերում ապրող շուրջ 4 հազար սպառողների: Տեղի բնակիչների հետ միասին, մատչելի բանկային սպասարկումներից 24-ժամյա բջջային կապից, համացանցից, կարող են օգտվել նաեւ հյուրերը:

Վրաստանի անկախության 100-ամյակի կապակցությամբ, հասարակական կենտրոնում բացվեց «Վրաստանի առաջին Ժողովրդական Հանրապետություն» ցուցահանդեսը:

Հասարակական կենտրոնի հանդիսավոր բացման առիթով տեղացիներին շնորհավորեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին: Կենտրոնի բացման արարողությանը ներկա էին տեղական ինքնակառավարման եւ սակրեբուլոյի անդամները, հյուրերը, տեղի բնակիչներն ու հարեւան գյուղերի ներկայացուցիչները:

Նշենք, որ, Ածղուրիից բացի, ներկա դրությամբ, երկրի տարածքում հասարակական 52 կենտրոններ են գործում բազում բնակավայրերում, այդ թվում՝ Փոկայում, Սադախլոյում, Վալեում, Բարալեթիում, Գումբուրդոյում, Ծալկայում, Բակուրիանիում եւ այլն:

ԴԱՏԱԿԱՆ

## ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵՂԱԴՐՎՈՂ 19-ԱՄՅԱ ՀՈՎՎԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՑՄԱՀ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ

***Վերջին օրերին լայն արձագանք առաջացրեց Դուշեթիի շրջանի Խադա կիրճում, հուլիսի 6-ին, անհայտացած Մառնեուլիի մունիցիպալիտետում բնակվող ամերիկացի ամուսիններ Ռայա եւ Լորա Սմիթների ու նրանց 4-ամյա որդու գործը:***

Հուլիսի 8-ին, ոստիկանությունը Դուշեթիի շրջանի Ցքերա գյուղում հայտնաբերեց վրացական եւ ամերիկյան քաղաքացիություն ունեցող ամուսնական զույգի ավտոմեքենան: Մանրակրկիտ որոնումների արդյունքում՝ ոստիկանությունը հայտնաբերեց ամուսինների դիակները:

Կասկածի հիման վրա, ոստիկանները ձերբակալել են 19-ամյա Մալխազ Կոբաուրուն: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, նրա ցուցմունքների հիման վրա կարողացել են գտնել 4-ամյա երեխայի դին: Հետաքննությունը տարվում է կանխամտածված սպանության հոդվածով, ինչը նախատեսում է ցմահ բանտարկություն:

Խադայի կիրճում սպանության մեջ մեղադրվող Մալխազ Կոբաուրին հայտարարեց, որ Ամերիկայի եւ Վրաստանի կրկնակի քաղաքացիներ Ռայան եւ Լորա Սմիթներին եւ նրանց չորսամյա որդուն ինքը չի սպանել:

Այս մասին մեղադրյալը հայտարարել է Մցխեթայի շրջանային դատարանում, որտեղ քննարկվում է խափանման միջոց սահմանելու հարցը:

«Ես չեմ սպանել նրանց, երկու արտասահմանցի տղամարդ էին, նրանք են սպանել եւ ինձ էլ սպառնացել, որ կսպանեն իմ ծնողներին»,- հայտարարեց մեղադրյալը:



### ՋՐՀԵՂԵՂԻ ՎՆԱՍՆԵՐԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԵՆ

*Ինչպես հաղորդել ենք թերթի նախորդ համարում, Նենսկրա գետի վարարումը լուրջ վնասներ հասցրեց Սվանեթիի երկրամասի Ճուբերի գյուղին: Մասնավորապես, վարարած գետը քանդել է գյուղը երկրամասի հետ կապող յոթ կամուրջներից վեցը, ավերել բնակելի տներ, անասնագոմեր, հասարակական օբյեկտներ: Լուրջ վնաս է հասցրել ճանապարհային ենթակառույցներին: Դեպքի վայր ժամանած Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, տեղում ծանոթանալով իրավիճակին, հայտարարեց, որ կառավարությունը հնարավոր ամեն ինչ կանի Ճուբերիի բնակիչներին հասցրած վնասը փոխհատուցելու ուղղությամբ:*

### ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ ՓՈԽԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

*Ճանաչված վրաց երգահան Գիա Ղանչելին գտնում է, որ երկրի պետական օրհներգը պետք է մատչելի լինի, ուստիեւ այն անհրաժեշտ է փոխել:*

*Այդ կապակցությամբ, հրապարակած բաց նամակում նա գրում է, որ ինքը բավական քննադատաբար է մոտենում ներկայիս օրհներգին: «Զաքարիա Փալիաշվիլու թեման հիանալի է, թեպետ այն, առանց երաժշտական ուղեկցության, դժվար է կատարել: Արդեն մի քանի տարի է, ինչ հետեւում եմ դրա կատարմանը: Ձայնագրած օրհներգն ինձ բավարարում է, թեպետ, երբ այն լսում եմ, առանց երաժշտական ձեւավորման, առաջանում է զգացում: Միակ ելքը հետեւյալն է՝ 20-րդ դարի սկզբներին ստեղծված «Սամշոբլոն» առավել մատչելի է կատարման համար, առանց երաժշտական ուղեկցության էլ ոչ լիարժեք բավարարվածություն,՝ պարզ է եւ, միաժամանակ, գոհացուցիչ: Այդ դյուրընկալելի երաժշտությունը կարող են հիշել անգամ մանկապարտեզի սաները»,- իր բաց նամակում նշել է Գիա Ղանչելին:*

### ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

*Բռնազավթված գոտու երկայնքով, ռուս օկուպանտները հերթական ապօրինի ձերբակալություն իրականացրին: Այս անգամ օկուպանտները Գորիի շրջանի Ձեմո Արծեւի գյուղի մոտակայքում հափշտակեցին Արխիսի բնակիչ Պաատա Առաքելովին: Մի քանի ժամ անց, ձերբակալվեց նաեւ նույն շրջանի Ախալուբանի գյուղի բնակիչ Գիորգի Կուջոշվիլին:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ 628 ԴԵՊՔ

Հուլիսի 2-ից 8-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի կողմից, երկրի ողջ մասշտաբով իրականացված վերահսկման միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 628 փաստ: Մասնավորապես, եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3408 հարկատու: Ստուգման արդյունքում բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքի փոխադրման 117 դեպք, տնտեսական գործունեության համար հարկատուների կողմից Վրաստանի օրենսդրության խախտման 32 դեպք, կանխիկ վճարումների ժամանակ գանձարկղային սարքից չօգտվելու 479 փաստ:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐ



Հուլիսի 6-ին, վրաց-հայկական «Սադախլո» ավտոմոբիլային սահմանային անցումակետում բացահայտվել է ապօրինաբար երկրի տարածք ոսկե զարդերի ներկրման երկու փաստ: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Ռուսաստանի քաղաքացիներ Կ.Մ.- եւ Կ.Գ.-ի ուղեբեռը, հայտնաբերել չհայտագրված ոսկե զարդեր 116,95 գրամ ընդհանուր քաշով:

Ապրանքի ընդհանուր արժեքը կազմել է 11906,84 լարի: Գործող օրենսդրության համաձայն, մաքսանենգային ապրանքը առգրավվել է, մեղավորները տուգանվել են:

## ԿԱՆԽՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ՍԻԳԱՐԵՏԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

Հուլիսի 9-10-ին, «Կարմիր կամուրջ» եւ «Սադախլո» ավտոմոբիլային-սահմանային անցումակետերում կանխվել է երկրի տարածք մաքսանենգային սիգարետի ներկրումը: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիներ Մ.Ի.-ին եւ Լ.Բ.-ին: Նրանց մոտ հայտանաբերվել է չհայտագրված 1600 գլանակ մաքսանենգային ծխախոտ: Մաքսանենգային ապրանքը բռնագրավվել է, իսկ իրավախախտողները տուգանվել են 1000-ական լարիով:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՏԵՍԱԿԵՏ

# ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ ԱՅՑԻՑ ՀԵՏՈ, ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ»

*Ներկա դրությամբ, վրաց-հայկական երկկողմ հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա եւ առկա է դրանց զարգացման միտում: Այդ մասին Lragir.am-ի հետ հարցազրույցում հայտարարել է Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի վերջին հինգ գումարումների խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը:*



Նա նշել է, որ նոր պայմաններում հնարավորություններ են ստեղծվել կարգավորելու մի շարք խնդիրներ, որոնք տարիներ շարունակ անհանգստացրել են երկու երկրների հասարակայնությանը: Պատգամավորի խոսքով, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի Վրաստան կատարած այցից հետո, որի շրջանակներում նա եղավ նաեւ Ջավախեթիում, դրական միտումն ակնհայտ է: «Այցը ծայրաստիճան կարեւոր էր ոչ միայն նրանով, որ վերջին 25 տարիների ընթացքում Հայաստանի բարձր պաշտոնատար եւ ոչ մի անձ չի այցելել Ջավախեթի: Ցանկանում եմ ուրախությամբ նշել, որ որոշում է ընդունվել՝ վերանորոգել Նինոծմինդայից Հայաստանի սահման եւ մյուս կողմից՝ Հայաստանից Վրաստանի սահման տանող ավտոճանապարհները: Բեռնատար ավտոմեքենաներն այդ ճանապարհներով շուրջօրյա երթեւեկում են: Ձմեռը մեզ մոտ տեւական է, յոթ ամիս սառնամանիքներ են լինում, այդ պատճառով էլ ճանապարհները կարճ ժամանակում շարքից դուրս են գալիս: Հիմա արդեն հայտարարվել է մրցույթ եւ Նինոծմինդայից մինչեւ Հայաստանի սահման տանող 17 կիլոմետրանոց ճանապարհահատվածը կրկին կասֆալտապատվի»,- հարցազրույցում հայտարարել է Հենզել Մկոյանը եւ հավելել, որ Վրաստանի կառավարությանն արդեն դիմել են խնդրանքով՝ հնարավորինս արագ վերանորոգել նաեւ Նինոծմինդա-Ծալկա-Թբիլիսի ավտոճանապարհը: Պատգամավորի խոսքով, առաջարկությունն ընդունվել է: Բացի այդ, ինչպես նշեց Հենզել Մկոյանը, երկրի ղեկավարությունը ծրագրել է, մինչեւ նոր ուսումնական տարին, վերանորոգել տարածաշրջանի մի շարք դպրոցներ, կառուցել նոր մանկապարտեզներ:

«Ելույթ ունենալով Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում, Նիկոլ Փաշինյանն իր խոսքում առանձնակի նշեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ վստահությունն է՛լ ավելի կուժեղանա, կլինի շատ ավելի, քան նախկինում էր»,- ընդգծել է Հենզել Մկոյանը:

Lragir.am-ի տված հարցազրույցում, պատգամավորը հայտարարել է, որ հարկ է լուծել եւս մի շարք կարեւոր խնդիրներ, մասնավորապես վրաց-հայկական սահմանի հատման հետ առնչվող ընթացակարգային հարցեր, որոնք հարկ է դյուրացնել: «Մարդիկ հաճախ երկար ժամանակ ստիպված են լինում սպասել, քանի որ, ինչպես հայկական, այնպես էլ՝ վրացական կողմից, չգիտես ինչու, համակարգիչները սկսում են գործել խափանումներով եւ առաջանում են երկար հերթեր: Եվս մեկ լուրջ հիմնախնդիր, Հայաստանի տարածքում, առանց որեւէ պատճառի, տուգանում են վրաստանցի ավտովարորդներին: Այդ կապակցությամբ, դիմել ենք Վրաստանի ներքին գործերի նախարարին, եւ նա հեռախոսով կապվել իր հայ գործընկերոջ հետ: Ներկայումս հիմնախնդիրը կարգավորվում է: Եվս մեկ հիմնախնդիր. ջավախեթցի ավտովարորդները սկսել են Հայաստանից ստանալ տուգանային կտրոններ, որոնք վավերացվել են ավտոմատ սարքերով՝ արագության գերազանցման հետ կապված: Սակայն, հայկական կողմը վերջերս պարզաբանել է, որ այդ տուգանքները նրանց չեն վերաբերում, քանի որ նրանք այլ երկրի քաղաքացիներ են: Այդուհանդերձ, տուգանքների մասին ծանուցումները մինչ օրս ավտոսեփականատերերը շարունակում են ստանալ: Տուգանքների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավտովարորդի հաշվով, արդեն հասել է 5-6 հազար դոլարի: Եվ դա այն դեպքում, երբ այդ մարդկանց մեքենաների արժեքը ընդամենը 3-4 հազար դոլարի է հասնում: Հայաստանի վարչապետը խոստացավ նպաստել նաեւ այդ հարցի կարգավորմանը»,- ասել է Հենզել Մկոյանը եւ հավելել, որ վրաստանցի ավտովարորդներին լուրջ մտահոգություն էր պատճառում նաեւ հայկական ճանապարհային ոստիկանության աշխատանքը: «Հայաստանի ավտոճանապարհներին վրացական պետհամարանիշերով ավտոմեքենաները կանգնեցվում էին յուրաքանչյուր տասը կիլոմետրի վրա: Այդ մասին էլ ենք խոսել: Ներկայումս վերահսկողությունն այնքան էլ խիստ չէ, մեքենաները, որոնք խախտում թույլ չեն տալիս, չեն էլ կանգնեցվում»,- ընդգծել է պատգամավորը՝ հավելելով. «Մոտ ժամանակներում սպասվում է Վրաստանի նոր վարչապետ Մամուկա Բախտաձեի այցը Հայաստան: Մեր վարչապետն արդեն հայտարարել է, որ իր առաջին այցերից մեկը իրականացնելու է Հայաստան: Համոզված եմ, որ երկկողմ կապերը, ինչպես նաեւ վստահությունն է՛լ ավելի կամրանա»,- հայտարարել է Հենզել Մկոյանն իր հարցազրույցում:

ՈԼՈՐՏ

# ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԱՏՈՒԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

իրացման հարցի լուծմանը: Կարծում եմ, այդ ուղղությամբ նշանակալի կլինի պետության կողմից ֆերմերներին տրվող վարկերի տոկոսադրույքների նվազեցումը, ինչը թույլ կտա գնել նոր տեխնիկա, պարարտանյութ: Մեզ համար կարեւորը ինքնարժեքի նվազեցումն է, իսկ դրան կարող ենք հասնել տեխնոլոգիաների նորացման ուղիով:

**Սայաթ Մկոյան (Նինոծմինդայի մունիցիպալիտետի Սաթխա գյուղ).**- Թուրքիայից կարտոֆիլի ներկրումը արգելելու մասին իր որոշմամբ, մեր կառավարությունը մեծ օգնություն ցույց տվեց մունիցիպալիտետի բնակիչներին: Մեզ տրվեց մեծ դժվարությամբ աճեցրած բերքն իրացնելու հնարավորություն: Ակնհայտ է, որ հարկ է գտնել այնպիսի ուղիներ, որ կարողանանք կարգավորել մեզ համար «աքիլլեսյան գարշապար» հանդիսացող հիմնախնդիրը: Դրա համար, ըստ իս, կառավարությունը պետք է սահմանի փոքր տոկոսադրույքներով ագրովարկեր, օգնի լուծել երկրի տարածքում պետգնումներ իրականացնող կազմակերպությունների կողմից մեր արտադրանքի իրացումը եւ այլն: Կարծում եմ, նման պայմաններում մենք կկարողանանք հասնել հաջողության:

Ինչպես հետեւում է վերոնշյալից, կառավարության վերապահած արտոնյալ ժամկետը, իրոք, նշանակալի օգուտ է բերել տեղի կարտոֆիլագործներին, թեպետ, նրանք նշում են նաեւ, որ դա ժամանակավոր է, եւ հարկ է գտնել հիմնախնդրի կարգավորման ավելի հուսալի ուղի:

Մենք դիմեցինք նաեւ երկրում ճանաչված գյուղատնտես, ոչ կոմերցիոն իրավաբանական անձ «Ախալքալաքիի կարտոֆիլի ասոցիացիայի» նախագահ **Մախարե Մացուկատովին**:

- ***Բատոնո Մախարե, այսպիսով, կառավարության կողմից մեր ֆերմերներին վերապահված եռամսյա ժամկետը սպառվեց: Ինչպիսի՞ն էր դրա ազդեցությունը:***



Մախարե Մացուկատով

- Նախ ասեմ, որ, վերջին երեք տարիների ընթացքում, Ախալքալաքիի մունիցիպալիտետում կարտոֆիլի իրացումը հիմնախնդրային հարց էր, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով: Որպես հիմնական պատճառ, ֆերմերները նշում են մթերքի բարձր ինքնարժեքը, ինչը թույլ չի տալիս մրցակցել այլ երկրներից ներկրած շատ ավելի էժան պարենային կարտոֆիլի հետ: Այդ կապակցությամբ՝ տեղի կարտոֆիլագործները բազմիցս դիմել են երկրի կառավարությանը, կոչ անելով օգնություն ցուցաբերել աճեցրած պալարապտղի իրացման գործում:

- ***Հավանաբար, դրանով էլ պայմանավորված էր կառավարության վերոնշյալ որոշումը:***

- Մասնակիորեն՝ այո, թեպետ սառույցը տեղից շարժվեց Վրաստանի խորհրդարանի անդամ, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայից մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի եւ տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների ակտիվ միջամտությունից հետո:

- ***Որքանով տեղեկացված ենք, որոշումն ընդունվել էր ներկրվող կարտոֆիլի քաղցկեղի հնարավոր տարածումը կանխելու պատրվակով:***

- Այո, թեպետ, կարելի է ասել, որ հիմնական պատճառը տեղի կարտոֆիլագործների համար, պալարապտղի իրացման հարցում, օգնության ցուցաբերումն էր: Հարեւան Թուրքիայից էժան կարտոֆիլի ներկրումն արգելվեց, ինչը, անմիջապես հանգեցրեց տեղական, կարող եմ վստահությամբ ասել, էկոլոգիապես մաքուր մեր կարտոֆիլի իրացման ծավալների մեծացման:

- ***Առանձին մարդիկ նշեցին, որ միջոցառումն ուշացված էր, եւ մեր ֆերմերները մեծ քանակությամբ կարտոֆիլ են կորցրել:***

- Դա, մի փոքր, մեղմ ասած, չափազանցված է: Իհարկե, կորուստներ եղել են, սակայն դրանք սովորականից ավելի չեն եղել, միջինը՝ մինչեւ 10 տոկոս է կազմում:

- ***Արժանի գնահատելով կառավարության որոշումը, ֆերմերները միաժամանակ նշում են, որ դա ժամանակավոր երեւույթ է եւ անհրաժեշտ է մշակել մշտապես գործուն, եթե ուզում եք, օրենքի ուժ ունեցող որոշումներով սահմանված համակարգային մեխանիզմ: Ի՞նչ կասեիք այդ մասին:***

- Իրոք, դա ժամանակավոր էր, թեպետ իրականացված միջոցառումները էականորեն օգնեցին տեղի կարտոֆիլագործներին՝ աճեցրած պալարապտղի իրացման գործում: Բնականաբար, մեզ համար այդ կենսական նշանակության հիմնախնդրի կարգավորման համար անհրաժեշտ են պետականորեն ձեւակերպված հատուկ մեխանիզմներ:

Այդ կապակցությամբ սկսեցինք ինտենսիվ խորհրդատվություններ անցկացնել մի կողմից մեծամասնական պատգամավորի ու տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների, մյուս կողմից՝ ֆերմերների միջեւ: Արդյունքում, մշակվեց փաստաթուղթ, որտեղ նշված են հիմնախնդրի կարգավորման մի շարք ուղիներ: Մասնավորապես, պետք է կարտոֆիլի արտադրությունում իրականացվի նորարարական արդի մոտեցումների ներդրումը, որոնք ուղղված կլինեն պալարապտղի որակի ու մրցունակության է՛լ ավելի բարձրացմանը, ինքնարժեքի առավելագույն նվազեցմանը, հիմնվեն պահեստային ժամանակակից տնտեսություններ, որտեղ կիրականացվի կարտոֆիլի մթերումը: Որպես հարցի լուծում, առաջարկվել է նաեւ պետության կողմից, ասենք, բանակի, քրեակատարողական հաստատությունների, մանկապարտեզների եւ այլնի համար տեղական ոչ միայն կարտոֆիլի, այլեւ մսակաթնամթերքների գնումների հարցը:

- ***Որքանո՞վ է իրատեսական՝ այդ առաջարկների գործնական կիրարկումը:***

- Ժամանակը ցույց կտա, առավել եւս, որ առաջնային են դառնում նաեւ նվազ տոկոսադրույքներով ագրովարկերի, երկիր ներկրվող պարարտանյութերի, սերմացուի որակի մոնիտորինգի եւ այլ հարցեր: Սակայն, ըստ իս, ներկա դրությամբ, նշանակալի է տեղական արտադրողների եւ պետական ինստիտուտների միջեւ համագործակցության ընդլայնումը: Բնականաբար, ողջունելի է այս հարցում Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորի ու տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*